«ԱՐԱՐԱՏ»
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

"АРАРАТ"
ОБЩЕСТВО
ВОДОПОЛЬЗОВАТЕЛЕЙ

Հեռ./Tel/ (0234) 4-50-59
Ֆաքս/Fax/ (0234) 4-50-59
էլ. փոստ /E-mail/

№ 135 «23» «06» 2023թ.

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան.

Տեղեկացնում ենք, որ ընթացիկ տարվա ձմռան ոչ բավարար տեղումների պատճառով անհրաժեշտ քանակությամբ ջուր չի կուտակվել Զանգակատան ջրամբարում: Վիճակը ավելի է բարդացել Զանգակատուն և Պ. Սևակ համայնքներում ոռոգվող հողակտորների ընդլայնման հետ կապված, հետագա տարիներին նույնիսկ ջրամբարի լցված լինելու պարագայում եղած ջրի պաշարը չի բավարարելու լիարժեք ոռոգում իրականացնելու համար:

Արարատ համայնքի Պայրուր Սևակ բնակավայրի 100 հա խաղողի և ծիրանի այգիների, մշակաբույսերը չուրացման վտանգի տակ են, քանի որ այդ տարածքի ոռոգման միակ ջրաղբյուրը Զանգակատան ջրամբարն է:

Պ. Սևակ բնակավայրի այդ տարածքի մշակաբույսերը չորացումից փրկելու համար անհրաժեշտ է նախկինում գործող «Արազափ-2» պոմպակայանի հարակից տարածքում կառուցել նոր պոմպակայան, որը մոտավոր հաշվարկներով կարժենա 15 մլն ՀՀ դրամ:

Խնդրում ենք Ձեր աջակցությունը պոմպակայանի կառուցման համար տարածք հատկացնելու և հնարավորության սահմաններում ֆինանսական միջոցներ տրամադրելու համար:

Հարգանքով՝

գործադիր տնօրեն՝ Ն. Հակոբյան